ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հավելված 1

Երևան քաղաքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները----------4
3. Երևան քաղաքի 2024-2026թթ. կանխատեսվող եկամուտները----------6
4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների----------8
5. Երևան քաղաքի 2024-2026թթ. կանխատեսվող ծախսերը----------9
6. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների----------10
7. Երևան քաղաքի 2024-2026թթ. կանխատեսվող դեֆիցիտը----------16

Ներածություն

Երևան քաղաքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Երևան քաղաքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Երևան քաղաքի հաջորդող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Երևան քաղաքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> և <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> օրենքներով:

Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Երևան քաղաքի 2024-2026թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Քաղաքի կառավարման ներառականության բարելավումը:
6. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
7. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
8. Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը:
9. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման ապահովումը:
10. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
11. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Երևանի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
12. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծումը:

13. Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը, ինչպես դրանց հիմնանորոգումը և ժամանակակից ստանդարտներին հասցնելը:
14. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
15. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը:
16. Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
17. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
18. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաև տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:
19. Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:
20. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
21. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
22. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:
23. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը, Երևանի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանման նոր մոդելի ներդրումը:
24. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:

25. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
26. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:
27. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Երևան քաղաքի 2024-2026թթ. կանխատեսվող եկամուտները

Երևան քաղաքի 2024-2026 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 111,730,345.5, 121,148,629.9 և 129,090,518.7 հազ. դրամ:
Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Երևան քաղաքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից:


ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
60,000,000.0
50,000,000.0
40,000,000.0
30,000,000.0
20,000,000.0
10,000,000.0
0.0
պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման բյուջե
սեփական եկամուտներ
դոտացիա
սուբվենցիա
ոչ պետական պաշտոնական դրամաշնորհ
2024թ.
2025թ.
2026թ.


ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
70,000,000.0
60,000,000.0
50,000,000.0
40,000,000.0
30,000,000.0
20,000,000.0
10,000,000.0
0.0
43,211,339.5
50,292,204.1
58,169,949.2
2024թ.
2025թ.
2026թ.

Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների

Երևան քաղաքի 2024-2026թթ. եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 43,211,339.5, 50,292,204.1, 58,169,949.2 հազ. դրամ, և սույն դինամիկան դիտարկելիս հարկ է արձանագրել, որ աճը կանխատեսվում է 5 տարվա կտրվածքով, հաշվի առնելով նաև 2022 թվականը՝ 34,538,631.0 հազ. դրամ և 2023 թվականը՝ 38,799,938.7 հազ. դրամ:

2024-2025թթ. ՄԺԺԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

- Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 13,775,741.1, 19,835,460.3 և 26,261,358.3 հազ. դրամ,
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 13,055,713.2, 13,382,106.0 և 14,051,211.3 հազ. դրամ,
- Գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 1,972,607.9, 2,110,922.2 և 2,264,661.4 հազ. դրամ,
- Վարչական գանձումներ՝ 7,827,100.5, 8,318,715.3 և 8,866,264.7 հազ. դրամ
- Աղբահանության վճարներ՝ 4,541,358.0, 4,995,493.8 և 5,495,043.2 հազ. դրամ

Պետության կողմից տրամադրվող հատկացվող շնորհները՝ այդ թվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան, նախնական կանխատեսմամբ նախատեսվում է մնալ անփոփոխ, սուբվենցիաները կանխատեսվում է համապատասխանաբար՝ 10,272,023.3, 9,799,211.8 և 9,190,802.8 հազ. դրամ, իսկ պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների կատարման համար տրվող հատկացումը կանխատեսվում է համապատասխանաբար՝ 44,698,635.7, 47,626,858.9 և 48,299,411.6 հազ. դրամ:



Երևան քաղաքի 2024-2026թթ. կանխատեսվող ծախսերը

Երևան քաղաքի 2024-2026թթ. ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 113,824,764.2, 123,164,269.7 և 130,645,760.0 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի պահպանման ծախսերի համատեքստում ստանալ այնպիսի մարդկային ռեսուրս, որը ի վիճակի կլինի համապատասխան ծառայությունները մատուցել քաղաքին՝ լուծելով համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը՝ մշակելով և կատարելով դրա իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Ընդհանուր ծախսերը ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների կարելի է նկարագրել հետևյալ խմբերով.

- Աշխատանքի վարձատրություն՝ 11,615,741.9, 13,340,480.5, 13,771,741.6 հազ. դրամ

- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝ 15,123,321.6, 17,015,593.5, 18,823,689.3 հազ. դրամ
- Սուբսիդիաներ՝ 49,971,017.0, 50,298,865.4, 50,618,095.3 հազ. դրամ
- Դրամաշնորհներ՝ 1,311,131.6, 2,673,757.3, 2,719,208.3 հազ. դրամ
- Նպաստներ՝ 1,177,772.7, 2,054,394.5, 2,802,668.0 հազ. դրամ
- Այլ ծախսեր՝ 25,596,912.4, 28,120,278.9, 28,612,307.9 հազ. դրամ
- Հիմնական միջոցներ՝ 14,850,723.2, 15,779,403.3, 19,690,412.0 հազ. դրամ
- Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ (5,821,856.2), (6,118,503.7), (6,392,362.4) հազ. դրամ



Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Երևան քաղաքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում հանգած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ համապատասխանաբար՝ 11,522,775.2, 11,932,857.4 և 12,466,101.6 հազ. դրամ
- Պաշտպանություն՝ 76,420.0, 37,270.0 և 35,860.0 հազ. դրամ
- Տնտեսական հարաբերություններ՝ 25,545,441.1, 30,300,487.0 և 31,578,456.3 հազ. դրամ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 10,492,407.0, 12,501,697.7 և 13,145,461.7 հազ. դրամ
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ 9,830,017.2, 10,106,145.6 և 11,279,767.6 հազ. դրամ
- Առողջապահություն՝ 451,390.0, 321,390.0 և 341.390.0 հազ. դրամ
- Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 7,268,517.9, 7,446,732.2 և 8,642.523.2 հազ. դրամ
- Կրթություն՝ 38,848,970.6, 42,391,901.4 և 44,602,122.8 հազ. դրամ
- Սոցիալական պաշտպանություն՝ 2,066,022.0, 2,102,423.6 և 2,149,551.3 հազ. դրամ
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 7,722,803.2, 6,023,364.8 և 6,424,525.5 հազ. դրամ
- Պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդային բյուջե հատկացումներ՝ 6,706,028.8, 7,572,553.8 և 11,601,108.3 հազ. դրամ:

Վարչական մասի պահուստային ֆոնդից միջնաժամկետ կտրվածքով համապատասխանաբար 7,722,803.2, 4,473,364.8 և 4,473,364.8 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել՝ հիմք ընդունելով ՀՀ 2024-2026 թվականների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծով նախատեսված ցուցանիշները, որպես պատվիրակված լիազորություն Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի/վարկային և դրամաշնորհային ծրագիր/ կատարմանը:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով՝ ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված նվազագույն սահմանաչափի պահպանման նպատակով:

Երևան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի խոշոր, նշանակալից և շարունակական ծախսային ծրագրերից են՝ Նախադպրոցական հաստատությունների կառուցում և վերանորոգումը՝ համապատասխանաբար՝ 1,600,000.0, 2,000,000.0 և 1,556,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել թվով 20 մանկապարտեզներ և մանկապարտեզների բակեր, ինչպես նաև կառուցել և տեղակապել թվով 4 մանկապարտեզներ, պետական աջակցությամբ իրականացնել թվով 2 մանկապարեզների հիմնանորոգման շարունակականությունը, որոնց հիմնանորոգումը սկսվել է դեռևս 2023 թվականին: Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանումը՝ համապատասխանաբար՝ 3,314,052.4, 3,895,667.7 և 4,376,609.8 հազ. դրամ, որի շրջանակներում միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է հիմնանորոգել և վերակառուցել թվով 273 բակային տարածք, ինչպես նաև իրականացնել Երևան քաղաքի բակային տարածքների ընթացիկ պահպանման աշխատաքներ, Վերելակների շարունակական փոխարինման նպատակով /նորերով/, համապատասխանաբար՝ 1,000,000.0, 1,000,000.0, 1,000,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի նախատեսվում է փոխարինել 100-ական վերելակներ, Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցումն ու պահպանումը՝ համապատասխանաբար՝ 2,460,402.7, 2,221,402.7 և 2,635,627.7 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել և վերակառուցել թվով 13 այգիներ, պուրակներ ինչպես նաև պետական աջակցության իրականացնել Բուսաբանական այգու հիմնանորոգումը, Մայրուղիների և փողոցների վերակառուցումն և հիմնանորոգումը՝ 457,500.0, 711,500.0 և 601,575 հազ.դրամ՝ միջնաժամկետ կտրվածքով Երևան քաղաքի շուրջ 166500քմ մայթերի սալիկապատման աշխատանքների իրականացման համար, Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և հիմնանորոգումը՝ համապատասխանաբար 5,434,882.5, 6,710,031.6 և 7,857,935.8 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի թվով 12 վարչական շրջանների երկրորդական փողոցներում իրականացնել ընթացիկ նորոգման շուրջ 724400քմ փոսալցման աշխատանքներ և գլխավոր փողոցների շուրջ 155կմ միջին նորոգման աշխատանքներ, Եզրաքարերի վերանորոգումը, որի շրջանակում միջնաժամկետ կտրվածքով Երևան քաղաքի վարչական շրջաններում կվերանորոգվեն շուրջ 76,650.0գծմ եզրաքարեր, Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգումները՝ որոնց շրջանակներում կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի

շուրջ 219,100.0քմ հարթ տանիքներ և շուրջ 200 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների մասնակի և ամբողջական հիմնանորոգում, Կամրջային կառուցվածքների վերականգնումն և պահպանումը, որի շրջանակներում միջնաժակետ կտրվածքով նախատեսվում է հիմնանորոգել Հրազդանի մեծ կամուրջը (Կիևյան), Դավիթ Անհաղթ-Կոմիտաս փողոցները միացնող ուղեկապը (Լամբադա կամուրջ), Արարատյան փողոցի վրա էստակադան, կառուցել Նորք Մարաշը Մյասնիկյան պողոտային կապող էստակադան, Տրանսպորտային համակարգի արդիականացումը, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ավտոբուսային հավաքակայան, ինչպես նաև Երևանի գլխավոր հատակագծի իրագործման և ճանապարհատրանսպորտային ցանցի զարգացման ընթացքի ուսումնասիրություն, վերլուծություն և ճանապարհափողոցային ցանցի զարգացման համալիր սխեմայի մշակում, Թանգարանների և թատրոնների հիմնանորոգումը, որի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել թվով 2 թանգարաններ և «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի ու Մանկապատանեկան ստեղծագործական քաղաքային կենտրոնի տարածքները, Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգումը՝ համապատասխանաբար՝ 300,000.0, 700,000.0 և 1610,000.0 հազ. դրամ, որի շրջանակում միջնաժամկետ կտրվածքվ նախատեսվում է կառուցել և հիմնանորոգել թվով 7 մարզադպրոցներ և արվեստի դպրոցներ, Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծությունը, որի շրջանակում կիրականացվեն Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակման առաջադրանքի հաստատում, Երևանի քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում, Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում, փորձաքննությունների, համաձայնությունների և հաստատման գործընթաց, Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակումը՝ որի շրջանակում կիրականացվի մշակել Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևմտյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագծի մշակում և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի (Պասկևիչի բլուրից հարավ) գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծեր, տվյալ գոտիներում միջավայրի կազմակերպման նպատակով:

Միաժամանակ պետական աջակցությամբ «Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է

միջնաժամկետ կտրվածքով՝ համապատասխանաբար՝ 4,000,000.0, 10,000,000.0 և 10,000,000.0 հազ. դրամ, կառուցել Երևան քաղաքի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի» «Աջափնյակ» կայարանը, իսկ «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային կանաչ զարգացման ներդրումային ծրագիր» ծրագրի շրջանակներում միժնաժամկետ կտրվածքով նախատեսվում է իրականացնել Իսակով-Արշակունյաց նոր ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներ:

Վարչական մասի պահուստային ֆոնդից միջնհաժամկետ կտրվածքով համապատասխանաբար 7,722,803.2, 4,473,364.8 և 4,473,364.8 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել՝ հիմք ընդունելով 2024-2026 թվականների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծով նախատեսված ցուցանիշները, որպես պատվիրակված լիազորություն «Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի» ծրագրի/վարկային և դրամաշնորհային/ կատարմանը:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով՝ ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված նվազագույն սահմանաչափի պահպանման նպատակով:



ԵՐԵՎԱՆ ՔԱՂՔԱԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ







Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
Պաշտպանություն
Տնտեսական հարաբերություններ
Շրջակա միջավայրի պաշտպանություն
Բնակարանային շինարարություն
Առողջապահություն
Հանգիստ, մշակույթ և կրոն
Կրթություն
Սոցիալական պաշտպանություն
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

Երևան քաղաքի 2024-2026թթ. կանխատեսվող դեֆիցիտը

2024-2026թթ կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են՝ ներգրավված վարկային միջոցները, տարեսկզբի ազատ մնացորդի վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները, ինչպես նաև Երևանի ենթակայության տակ գտնվող կազմակերպություններում կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող բյուջետային ելքերը, որի ընդհանուր պատկերով 2024-2026թթ. կանխատեսվող դեֆիցիտը կազմում է 2,094,418.7, 2,015,639.8 և 1,555,241.3 հազ. դրամ:

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ